ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է N «**ՏԾԻԳ-ԲԲԱՇՁԲ-2014/5ՃՀ»** ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում 23.07.2013թ.-ին կնքված պայմանագրում 2014թ. հոկտեմբերի 24-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ:	Փոփոխությունը պայմանավորված է ճանապարհային պատվածքի «սառը վերօգտագործման» եղանակով վերամշակման ընթացքում օգտագործվող հավելանյութերի քանակական, իջատեղերի մակերեսների և գոյություն ունեցող խողովակների նորոգման ծավալների փոփոխությամբ, երթևեկելի մասի լայնության ավելացման, հենապատի նորոգվող հատվածի երկարության նվազեցման, գոյություն ունեցող ապամոնտաժված մետաղական արգելափակոցների վերատեղադրման փոխարեն նորի տեղադրման հանգամանքներով:
Փոփոխության նկարագրություն:	Փոփոխության արդյունքում Պայմանագրի գինը չի փոխվել, Պայմանագրի թիվ 1՝ «Ծավալաթերթ-նախահաշիվ», թիվ 2՝ «Օրացուցային գրաֆիկ» հավելվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
Փոփոխության հիմնավորում:	Հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության՝ «Ճաննախագիծ» ինստիտուտ ՍՊԸ-ի 2014թ.-ի օգոստոսի 1-ի թիվ 31ա, օգոստոսի 26-ի թիվ 39 և 40 մասնագիտական դրական եզրակացությունները:

Կատարված փոփոխությունները չեն գերազանցում պայմանագրային արժեքի 15%-ը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տիգրան Ջանոյանին:

Հեռախոս՝ 010 /580-523/

Էլ. Փոստ՝ tjanoyan@transportpiu.am

Այլանհրաժեշտ տեղեկություններ՝ _____

Պատվիրատու՝«Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ